

- 39 Զի էրն այր մեծ հանապազօր
 Ներհուն ճարտար բանիւ հրզօր
 Որոյ նրման մինչեւ ցայսօր
 Ոչ ոք եկաց դէտ անդանօր :
- 40 Արդ յետ մահուան Յօհան Պետին
 Հաճութեամբ մեր Հայոց Ազգին
 Ի 'լստ արքունեաց հըրամանին
 Յակօբ Նալեան կալնոյր զօտեղին
- 41 Որ յագանելն ըզմեծ խիլայն
 Յեպարքոսի մեծի ատեան
 Անդէն նրմա բնկերանան
 Սարգիս րաբուն Սեղբոս իշխան :
- 42 Յետոյ Սարգիս զԽորհուրդ սրբտին
 Յայտնեալ նորոգ Պատրիարքին,
 Յետս կայր յեւոյ եւս դէտ հօտին
 Գաղատիոյ իւր վիճակին :
- 43 Առ այս թէպէտ նոյն Պատրիարք
 Ընդ Անկիւրեայ իշխան աւագ
 Էին անկեղծ բանիւ դիմակ,
 Այլ նա չփոխէր զիւր ասից կարգ :
- 44 Զի նա բարւոք յառաջ խորհէր
 Զոր միանգամ առնել պարտն էր,
 Եւ զոր հաստատ որոշեալ էր,
 Ոչ յանգեւ զայն նրմա մարթ էր :
- 45 Կացեալ ուրեմն Սարգիս անգահ
 Խիղճ մըտաց իւր չունելով զահ
 Ապրիւր անդէն հանգիստ վըստահ,
 Գոհ լեալ զերկնից յամենայն պահ :